ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.08.2013թ.
206-ի 2

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի նախագահ
պարոն Արտակ Շաբոյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շաբոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հանդիսանու՞մ է արդյոք Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի սպասարկումն իրականացնող "Փարքինգ Սիթի Սերվիս" ՓԲԸ-ն ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպություն:

Նշենք, որ Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի սպասարկումն իրականացնում է բացառապես "Փարքինգ Սիթի Սերվիս" ՓԲԸ-ն:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց ***հետո 5-օրյա ժամկետում:*** Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան